

127

35871

28

SPR 1988

b1100

ՀՈՐԴ ԲԱՅՐՈՆ

# ԵՐԱԶԼ

1858/Հ

ԹԱՐԳՄԱՆԵՑ  
ՅՈՎՃԱՆՆԵՍ ԽԱՆ ՄԱՍԵԿԵԱՆ  
(1894)

Սոյն գրքոյիկեց տպագրուում է 1000 օրինակ, որից գոյացած հասոյթը  
նուիբռում է Վանաքի Սուլբ Մինաս եկեղեցուն,





Հայ Թրիումֆակ հայութեան

Դեկտ

1934, Հուն.

125-ը



ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆԻ

ԵՐԱԾՈՅ

I

Երկու էռւթիւն ունի մեր կեանքը.  
Եւ քունն էլ ունի սեպհական աշխարհ.  
Մի սահման է դա այն բաների մէջ,  
Որոնց թիւը կերպով մենք անուանում ենք  
կեանք և մահ։ Քունն էլ՝ իր աշխարհն ունի,  
Մի մեծ պետութիւն, իոլ իրողութեամբ.  
Եւ երազները, իրենց ընթացքում  
Ունին շունչ և վիշտ և տանջանք և լաց,  
Եւ ուրախութեան զգացողութիւն։  
Նոքա թողնում են մի կերպ ծանրութիւն  
Նոյն իսկ արթնութեան մտքերի վերայ։  
Նոքա բառնում են յաճախ ծանրութիւն  
Նոյն իսկ արթնութեան մեր վաստակներից։  
Նոքա բաժնում են մեր էռւթիւնը.  
Դառնում են իրօք մի մաս մեր անձի  
Եւ ժամանակի. Նոքա գալիս են  
Զերթ մունետիկներ Յաւիտենութեան.  
Նոքա անցնում են իրը ուրուականներ  
Անցեալ դարերի. Նոքա խօսում են

Իբրև սիրելիներ. նոքա ոյժ ունին,  
Խնդի և վշտի բռնակալութիւն՝  
Մեզ դարձընում են ինչ որ մենք չէինք  
— ոյլ ինչ ուզում են. և ցընցում են մեզ  
Անցած բաների մըտապատկերով,  
Եւ անհետացած ուրուականների  
Արհաւիրքներով: — Այդպէս չեն նոքա:  
— Զէ՞ թէ անցեալը ստուեր է միայն.  
— Ի՞նչ են երազներն. — մըտքի ստեղծումներ:  
Միաքը կարող է և գոյութիւն տալ  
Եւ իր ըստեղծած մոլորակները  
Կարող է լցնել արարածներով  
Աւելի չքնաղ քան երբ և իցէ  
Կեանք են ունեցել. զունչ տալ ձևերի,  
Որոնք աւելի կարող են ապրել  
Քան որ և իցէ կենդանի մարմին:  
Եւ կամենում եմ յիշել մի տեսիլ,  
Որ երազած եմ գուցէ քունի մէջ.  
Քանզի, ըստ ինքեան, մի մըտածութիւն,  
Քունի մի խոկում՝ ամբողջ տարիներ  
Կարող է գրկել և երկար մի կեանք  
Ամփոփել միայն մի կարճ ժամի մէջ:

II

Տեսայ երկու անձ, ծաղիկ հասակում,  
Կանգնած, մի սիրուն բլրակի վերայ.  
Կանանչ եր բլուրի, և մեղմ զառիվայլ,  
Որպէս թէ լինէր վերջին հրուանգան

Իր նըմանների մի երկար շարքի:  
Միայն ծով չը կար էր ըստորոտին.  
Բայց կար շատ շքեղ մի դաշտանըկար  
Եւ անտառների, արտերի ծըփանք.  
Կային և տեղ, տեղ ցըրտւած տընակներ.  
Ծուխն օձապըտոյտ վեր էր բարձրանում  
Գեղջուկ հիւղերից: Բլուրի գագաթին  
Ծառերը պըսակ էին բոլորած,  
Ոչ թէ բընութեան քմահաճոյքով  
Այլ մարդու ձեռքով: Այն երկու հոգին,  
Կոյսն ու պատանին, լուռ նայում էին  
Մէկն՝ այն բոլորին որ կար ներքնում  
իր պէս հրաշագեղ—իսկ տղան՝ կոյսին.  
Եւ երիտասարդ էին երկուսն էլ.  
Սակայն երկուսից մէկն էր գեղեցիկ.  
Եւ երիտասարդ էին երկուսն էլ,  
Սակայն ոչ նըման իրենց տարիքով:  
Որպէս գեղանի լուսինն անուշիկ  
Որ հորիզոնի եզերքն է հասել,  
Կոյսն էլ հասել էր կընութեան շէմքին:  
Պատանին նուազ ամառ էր տեսել.  
Բայց վաղահաս էր սիրան իր տարիքից.  
Եւ նորա աչքին՝ ամբողջ աշխարհում  
Մի միակ գէմք կար, միակ սիրելի,  
Որ այս ըոպէս ժպտում էր նորան.  
Նա այնքան երկար դիտել էր գէմքն այդ,  
Որ իր հոգու մէջ տպաւորուել էր,



Եւ անջընջելի մընում էր այստեղ։  
Նա առանց կոյսին շնչել չէր կարող։  
Նա էր իր կեանքը, նա էր իր ձայնը։  
Չէր խօսում նրա հետ, այլ սարսրում էր  
Նորա մէկ բառից. նա էր իր լոյսը։  
Նորա աչքին էր հետեւմ իր աչքը,  
Եւ նորանով էր տեսնում սոսկ, և այդ՝  
Գունաւորում էր ամեն առարկայ։  
Չէր ապրում այլս սեպհական կեանքով,  
Այլ միայն նրա մէջ. նա էր ովկիանը  
Իր մըտածութեանց գետերի առաջ։  
Ուր որ ամեն բան գտնում էր վախճան։  
Նորա մէկ շեշտից, միակ հըպումից  
Իր արիւնն առաջ ու յետ էր յորդում,  
Նորա թըշերը փոթորկի նըման  
Գոյն էին փոխում. սիրտն անգէտ էր  
Թէ ինչն էր պատճառ այս իր գալարման։  
Բայց կոյսն անմաս էր այդ ըզգայութեանց.  
Նրա համար չէին իր հառաջները.  
Նա մի եղբայր էր, ոչինչ աւելի։  
Եւ այդ շատ բան էր. եղբայր չէր տեսել,  
Այլ մանկութիւնից եղբայր անունը,  
Նորան էր տուել.  
Իսկ ինքն էր մի հին և աղսիւ տոհմի  
Միակ ժառանգը. Քաղցը էր պատանուն եղբայր  
անունը,  
Բայց դարձեալ նորան դա չէր հաճելի։

Եւ ինչու. — մի՞որ՝ եկաւ ժամանակ  
Երբ նա հասկացաւ, երբ կոյսն ըսկսեց  
Ուրիշին սիրել. Այս ըսպէին էլ  
Նա մի ուրիշին տըւել էր սիրտը,  
Եւ այդ բըլուրի գագաթին կանգնած  
Նայում էր հեռուն, տեսնելու համար  
Թէ սիրականի նժոյգն էլ արդեօք  
Նայնչափ անհամբեր էր որչափի ինքը։

III

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ. — մի հին դղեակ էր.  
Պարըսպի առաջ կար նըժոյգ սարքած,  
Ներսը, հնադարեան մի դահիճի մէջ  
Կար նսյն պատանին որ տեսած էի,  
— Մենակ, գունաթափ, երթևեկում էր։  
Յետոյ նա նստաւ, առաւ գըրիչը  
Եւ գըրեց բառեր որ ես չիմացայ.  
Ապա զլուխն առաւ իր ձեռքերի մէջ  
Եւ ամբողջ մարմուկ այնպէս ցընցուեցաւ,  
Որ կարծես տենդից բընդուած լինէր.  
Նորից վեր կացաւ, և ատամներով  
Դողահայ ձեռքով պատռեց գըրածը.  
Բայց նորա աչքից արտասուք չեկաւ.  
Յետոյ ինքն իրան հանգստացնելով  
Մի կերպ լրջութիւն տըւաւ ճակատին.  
Եւ մինչ նորհում էր, նորից երեաց  
Միենոյն կինը, որին սիրում էր.

Լուրջ էր տիկինը, նաև ժպտադէմ.  
Եւ սակայն գիտէր պատանու սէրը.  
Գիտէր... - մարդ դորան շուտ է գիտակցում -  
Որ իր պատկերը նորա սըրափ մէջ  
Մըսայլ է ձըգել. և նա տեսնում էր  
Խեղճի տանջանքը. բայց դեռ բոլորը  
Զը գիտէր: Տըղան՝ վեր կացաւ, և պաղ,  
Բայց քընքոյշ կերպով բոնեց նրա ձեռքը.  
Մի բոպէ նրա երեսի վերայ  
Անբացատրելի խոհերի մի դրուագ  
Արտագըծուեցաւ. բայց իսկոյն անցաւ  
Ինչպէս եկել էր: Նա թողեց ձեռքը  
Եւ դանդաղ քայլով դուրս եկաւ որահից.  
Բայց մընաս-բարե չէր այդ, և նոքա՞  
Երբ բաժանուեցան՝ դեռ ժպտում էին.  
Տըղան դուրս եկաւ այն հին դղեակի  
Ծանրակուռ դընից, ձի հեծաւ... գընաց,  
Եւ այն տան շէմքին մէկ էլ չերեաց:

IV

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ. նոյն պատանեակը  
Զարդացել էր այժմ, արդամարդ դարձել.  
Տաք կլիմաների անապատներում  
Նա ստեղծել էր իրեն՝ հայրենիք.  
Եւ նորա հոգին ըմպում էր այնտեղ  
Վառ արեգակի ճառագայթները:  
Շըշապատուած էր օտար և մըսայլ

Կերպարանկներով. նա ինքն էլ այն չէր  
ինչ որ եղել էր, նա թափառում էր  
Անվերջ՝ ծովից ծով, ցամաքից ցամաք:  
Անթիւ պատկերներ ալիքների պէս  
Գրոհ էին տալիս այժըմ գէպի ինձ,  
Բայց ամենի մէջ նա տեղ էր բըռնում.  
Եւ վերջինի մէջ նա ինձ երեաց  
Այն ինչ հանգչում էր մէջօրեան տօթից  
Քանզւած սիւների բեկորների մէջ  
Թափուած պատերի հովանու ներքե,  
Որոնք աւելի դիմացել էին  
Քան թէ անունը կառուցտղների:  
Քընած էր. իր շուրջ արածում էին  
Բազմաթիւ ուղտեր. աղբիւրի ափին  
Ազնիւ նըժոյգներ կային կապկապած.  
Երկար հագուստով մի մարդ հսկում էր,  
Մինչ ննջում էին իր ցեղակիցներն.  
Եւ նոցա վերե կար կապոյտ երկինք,  
Այնպէս ջինջ, անամպ, անբիծ, գեղեցիկ,  
Որ Աստուած միայն տեսանելի էր:

V

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ: Միրուած տիկինը  
Ամուսնացել էր հիմա մէկի հետ,  
Որը չէր սիրում նորան ջերմագին.  
Եւ նա իր տան մէջ - մայրենի տան մէջ,  
(Մղոններ հեռու պանդուխտից, արնից...)

Ապրում էր, պատած իր մանուկներով —  
Տըղերք, աղջիկներ, չքնաղ դէմքերով:  
Բայց տես, երեսին կար թոյրը վշտի.  
Ներքին մաքառման ծանրատիպ թուղար.  
Եւ աչքն անհանգիստ ցած էր խոնարհում.  
Կարծես թարթիչքը ծանրացած էին  
Անհեղ արցունքից — Ի՞նչ էր այդ վիշտը.  
Չ'է թէ հասել էր սրտի փափագին.  
Եւ նա, որ նորան այնքան սիրել էր  
Ներկայ չ'էր, որ իր մեղսալից իղձով  
Չար յոյսով, և կամ անզուսպ տիրութեամբ,  
Պղտորէր անբիծ նորա մտքերը:  
Ուրեմն մւրկից էր այդ սրտի ցաւը.  
Տիկինը երբէք նորան չ'էր սիրած,  
Ոչ առիթ տըւած, որ այդպէս կարծէ,  
Չ'էր կարող ուրեմն պանդուխար լինել  
Պատճառ այն ցաւի, որ նորա հոգին  
Ճարակում էր այժմ. — անցեալի ուրուն!

VI

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ: Թափառականը  
Վերազարձել էր. ես տեսայ նորան  
Կանգնած սրբազան խորանի առջև,  
Եւ նորա կողքին մի հարս նազելի:  
Միրուն էր կոյսը, բայց չ'էր այդ դէմքը  
Նրա պատահութեան լուսատու աստղը.  
Եւ երբ կանգնած էր խորանի առջև

Նորա ճակատին երևաց կրկին  
Միենայն պատկերն, և նոյն սարսուսը,  
Ինչ որ հին սրահի առանձնութեան մէջ,  
Ճնցեց իր կուրծքը. եւ այժմ էլ կրկին,  
Ինչպէս այն ժամում, իր դէմքի վերայ  
Անբացատրելի մտքերի մի ամպ  
Գծագրուեցաւ, և յետոյ անցաւ  
Ինչպէս եկել էր: Նա կանգնեց հանգիստ  
Եւ արտահանեց սրբազան ուխտը  
Բայց իր խօսքերը ինքը չ'էր լսում:  
Ամէն բան իր շուրջ պտոյտ էր գալիս.  
Նա այժմ չ'էր տեսնում ինչ որ կայ, ոչ էլ —  
Ինչ պէտք է լինէր. — այլ հին դղեակը,  
Նախկին դահլիճը, ծանօթ սենեակներն,  
Տեղն, օրը, ժամը, արեն ու ստուերը,  
Ամէն, ամէն ինչ որ յարակից էր  
Տեղին ու ժամին, և այն էտին  
Որ իր դժբախտի ճակատագիրն էր  
Բոլորը եկաւ, և արձանացաւ  
Լոյսի և նրա մէջ: Ի՞նչ գործ ունէին  
Նոքա՝ այդ ժամում, այդպիսի տեղում:

VII

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ: Միբեցեալ կինը...  
Օհ, նա փոխուած էր, հոգեկան ցաւից.  
Միտքը թռել էր իր բնակարանից.  
Եւ այն աչերը... չ'ունէին այլև



Իրենց սեպհական պայծառութիւնը.  
Դա մի հայեացք էր ոչ աշխարհային.  
Նա դարձել էր այժմ կարծես թագուհին  
Ֆանտաստիկական թագաւորութեան.  
Նորա խոհերը չ'էին, եթէ ոչ  
Անկապ բաների մի յարակցութիւն.  
Չեեր, էակներ, անշօշափալի,  
Այլոց աչերին անտեսանելի,  
Քնտանի էին նորա աչքերին.  
Եւ այս է ինչ որ մարդիկ կոչում են  
Խելացնորութիւն. բայց խելօքները  
Ունին աւելի խորունկ խենթութիւն.  
Մելամաղձութեան նայուծքը՝ բնածին  
Մի պատուհաս է, ինչ է արդեօք այն.  
Նա ճշմարտութեան հեռաղիտակն է  
Որ մերկացնում է հեռաւորութիւնը  
Իր ֆանտազիայից. և մօտ է բերում  
Մեր աչքին՝ կեանքը՝ իր մերկութեան մէջ  
Դարձնելով սառն իրականութիւնը  
Դեռ էլ աւելի դառն և իրական.

VIII

Մի փոփոխութիւն եկաւ երազիս  
Պատկերի վերայ: Թափառականը  
Այժմ մենակ էր ինչպէս անցեալում.  
Այն էակները, որոնցով երբեմն  
Շրջապատուած էր, չը կային այլս  
Եւ կամ նորա դէմ պայքարում էին:

Նա նշաւակն էր ամէն անէծքի  
Եւ հալածանքի, և շրջապատուած  
Ոխակալութեամբ և թշնամութեամբ:  
Լեզի էր խառնած ամէն բանի մէջ  
Որ նորա առաջ դրում էր, մինչև  
Նըման հին դարու Պոնտեան արքային  
Նա էլ՝ թոյներից առնում էր սընունդ.  
Նոքա չ'ունէին այլսո զօրութիւն  
Այլ և մի տեսակ կերակուր էին.  
Ապրում էր նրանով, ինչ մահ է այլոց:  
Լեռներն էին այժմ իր բարեկամներն.  
Աստղերի հետ էր ասուլիս անում  
Եւ ափեզերքի կենդանի Ոգու.  
Եւ նոքա նորան սովորցնում էին  
Իրենց խորհուրդը. և նորա համար  
Գիշերի գիրքը լայն բաց էր արուած.  
Եւ խոր անգնդից եկող ձայները  
Նրան յայտնում էին հըրաշք ու դադանիք  
Թող այդպէս լինի:

IX

Երազս անցել էր. չը փոխուեց այլսո.  
Շատ զարմանալի մի երազ էր այն,  
Որ երկու անբախտ արարածների  
Ճակատագիրը այնպէս գծագրեց,  
Իրականութեան գրեթէ համաձայն,  
Մէկը՝ յանգելով խելացնորութեան  
Եւ երկուսն էլ՝ զոհ տարաբախտութեան,  
ՎԵՐՁ





(Q)

ՄՄ Հայոցինուկուն գրադարան



MAL031149

